երկեան 'ի Թագաւորէն և 'ի նախատանաց ազգին եւ առաքեցին զԳէորգ Գոտուռ առ Դատաւորն, և յայտ արարին նմա զհրաժարումն Լեռնանց 'ի գործոյ։ Եւ նա պատուիրեաց նմա երթալ ասել, առանց ինչ առնելոյ լինիմ ձեռնամուխ 'ի գործն. եւ եթէ ոչ հաճեսցեն զկամս իմ, նուազեցուցանեմ քան զոր խոստացայ առնել յառաջագոյն, և այնպէս կենճռեցից զինդիրն որ յաւիտեանս ոչ ոք կարասցէ մաքրել և կարգաւորել. և եթէ 'ի սմին ժամանակի պատահեսցի խռովութիւն ինչ, չլինիմ երբէք միջամուխ, և դուք երբէք չունիք դատանել հանդիստ. և այլ ասացին նման բանք սպառնալեաց։ Լուեալ Վարդապետաց զայսոսիկ վերստին դնացին առ նա, և փոքր ինչ հանդարտեցին զմիտս նորա, և զգումարն պահանջեալ նուազեցուցին. բայց նա չկամէր առնուլ ինչ առաւել քան զոր պահանջէրն, եւ այն իբր յանդորրութիւն Հայոց, զի մի խաղաղ վշտացեալ Ցունաց յարուցցեն աղմուկ խռովութեան և մշանջենաւոր տեւեսցէ այն, և զկնի այլոց բանից ամոքեցին զմիտս նորա, եւ յանձն առին շատանալ առ ժամն խոստմամբ նորին եւ մեկնեցան։ Եւ ապա ըստ ազգ արարելոյ նորին դարձեալ դնացին առ նա (Նոյեմբեր 8), ուր էին Նուրի Էֆէնտի և Ջուխատարն, եւ ծանեան 'ի կերպարանաց նոցին թէ գժտեալ են ընդ միմեանս։ Այլ Դատաւորն՝ երբ ասացի ձեզ երթալ 'ի քննութիւն Բեթղեհէմի, զի ամբաստանեալ էք զինէն առ եղբայրն իմ. եւ նորա վշտացեալ յանդիմանէ զիս, եւ նոքա ասեն. եղեն այդպիսի բանք, երթալ անդ եւ բարւոք քննել զտեղիս արդարութեամբ՝ տալ զբաժինս Հայոց։ Նուրի Էֆէնտի ասէ՝ այսքան ժամանակ չծանուցանես ինչ ինձ, և զերկոսին ազգսն լուելեայն կոչեալ առ քեզ աղաչանօք եւ իրաւախոհութեամբ կամիս զգործն կատարել, և զԲեթղեհէմ 'ի քննութիւն առնուլ, զոր չէ գրեալ Արքայի. եւ եթէ միայն քեզ յանձն արարին զգործս Թագաւորն և Դենպետն, կատարեա ըստ կամաց քոց. զի յառաջագոյն կարգեցայ հրովարտակաւ Փոխանորդ Մուվէլլայի և յայս նուազ գործակից քեզ. ուստի հարկ անհրաժեշտ համարիմ ըստ պաշտօնիս իմանալ զամենայն ինչ. զի պատասխանի տայ որոց հարցանենն զիս։